Քաղվածք

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 25 դեկտեմբեր 2019թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2019թ. դեկտեմբերի 25-ի նիստում, քննության առնելով դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար հայտարարված բաց մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող Ա. Թ.-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, պարզեց, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի հավելվածի 16-րդ ենթակետով առ այն, Հանձնաժողովը քննության է առնում ներկայացված փաստաթղթերը և կայացնում համապատասխան որոշում՝ մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ մասնակցությունը չթույլատրելու մասին՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Ա. Թ.-ին թույլատրել մասնակցելու դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար հայտարարված բաց մրցույթին: